արժանացեալ են վաղուց շրջակայ աղգայնոց և օտարաց համակրութեանը, ու անոնց լիարերան շնորհակալութեանը։ Ուստի սոցա զանազան սրխրպի բարեգործութեանց և բարենախանձ առաքինութեանց, նոյնպէս և տեղւոյս Նորակառոյց Աղօթատան շինութեան նկարագրութիւնքն ուրիշ աւելի պատեհ անգամի յանձնելով՝ առժամս կդառնամ միայն յիշատակեալ Միքայէլ Ադտարեանցի մեծագուսմար նուիրանաց համար գրել՝ զոր ընծայից ի պայծառութիւն և ի բարեզարդութիւն Նորակերտ Աղօթատան Հայոց տեղւոյս Եյսկ քաղաքի։

Նորա՛կառոյց Աղօթատան տեղւոյս շինութեան աւարտումն Աստուածային օգնութեամբը ամենայն բարեյաջողութեամբ։ ի գլուխ հանելով բոլորանուէր ջանիւք և յորդորանօք հանգուցեալ հօրս Տէր Գրիգոր Աւագ Քահանայի Սուրիասեանց և իսկայնն գործակցութեամբ ի ձեռն ընծայաբերութեան ընդհանրապէս բարեզգաց անձանց՝ սկսաք համաձայն եկեղեցւոյս արտաքին գեղեցկագիր շինութեան՝ նորա ներքին բարեվայելչութեանն ու պայծառութեան համար ևս անդէն առնոլին ձեռն ի գործ արկանել։ Բայց որովհետև այս ամեն բանը միևնոյն ժամանակ հոգալու կարելոր ծախուց կողմանէ ոչ սակաւ դժուարութիւնք ընդառաջ կելնէին տեղւոյս սակաւաթիւ Հայազգի ժողովրդեան համար, որ ընդ ամենը տասն և երկք տունէ կրաղկանայ, վասն որոյ անհնարին իմն թուէր լինել այդ գէթ առ սակաւիկ մի։

Այլ քանզի Աստուածային նախախնամութեան ամենակարող ազդակցութիւնը միշտ անբաժան է և զուգընթաց ամենայն Աստուածահաճոյ առաքինութեան և ձեռնարկութեան հետ՝ իրրև զեկավար և առաջնորդ իւր ընտրեալ անօթից ձեռքով. նմին իրի մեզ, արդարև, աւելորդ իմն էր մտատանջել և այդ բանին կատարման համար. վասն զի ահա վերոյիշեալ Ադտարեանց բարեգործ անձն՝ շարժեալ յիւր գովելի քրիստոնէավայել ջերմեռանդն զգացմանց՝ իսկոյն յանձն առաւ եկեղեցւոյս ամենակարևոր միանգամայն և բազմագուսմար ծախուց կարօտ պիտոյից մէկն ինքնին միայնակ հոգալու, այն է՝ եկեղեցւոյս սեղանոյ խաչկալի շինութիւնն՝ ի յիշատակ հոգւոյ վաղամեռիկ եղբօրն հանգուցեալ Սիմէօնի Ադտարեանց, զոր և արդէն իսկ փոյթ ընդ փոթ ամենայն կատարելութեամբ և յարմարագոյն կազմակերպութեամբ շինել ևս տուաւ։ Խաչկալին վերայ զետեղուած են տասներիք պատկերք ոսկեձոյլ, որք մէկ մէկ մանրամասն նկարագիր են հրաշափառ Տնօրէնութեանցն Փրկչին մերոյ։

Աւասիկ մի չափաւոր վիճակ ունեցող Եյսկաբնակ Հայկազն անձի գովելի հոգեսիրութեան արդիւնաւորեալ արգասիք։

Արդ, ընկալցի Տէր ի հաճոյս իւր զայս յիշատակ հոգւոյ հանգուցեալ Սիմէօնի Ադտարեանց և զփոխարէնն տացէ նուիրատու Միքայէլի Ադտարեանց վայելել՝ յարատևելով ևս քան զևս ի գործս բարիս ի փառս Աստուծոյ և ի պայծառութիւն եկեղեցւոյս։

ՄԱՐԳԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՍՈՒՐԻԱՍԵԱՆՑ.

Ի 28 Հոկտ. 1874
Յեկ։

Ռազմական Ռազմիզորդական Ընկերութեան հետևեալ հաշուոյն հրատարակութիւնը թախանձանօք խնդրուած է։

ՀԱՇԻՒ

Ռազմական մարմնոյ ազգային օգնել համար կազմուած «Ռազմիզորդական Ընկերութեան» սկսեալ է 1-էն Օգոստոսէ 1873է մինչև 1 Օգոստոսէ 1874 ամի։

(ՄՈՒՏՔ)

Նուիրատու Անդամոց Անունները եւ իրանց տուած նուէրքը Ընկերութեան մատենից քաղված։

	Ռ.	Կ.
Անդրէաս Արքեպիսկոպոս Առաջնորդ Շամախւոյ	15	
Առաքել քահանայ Իւղբաշեանց .	5	
Շուշւոյ տղատոյի վերաբերեալ է բոլոր։		
Իվան Դ. Լազարեանց . .	25	
Մ. Զ. Զօհրապեանց . .	24	

Գրիգոր Թումայեանց. . . 24
Յովսէփ Թումայեանց . . 10
Առաքել Ծատուրեանց . . 20
Համբարձում Թումայեանց . . 20
Յակոբ Ապրէսեանց . . . 12
Յարութիւն Ապամեանց . . 15
Ալէքսանդր Օրբէլեանց . . 15
Մուսայէլ Շահկեսանեանց . . 20
Հողակաթ Յ. Շահկեսանեանց . 10
Աւետիս Ղարաբէգեանց . . 12
Աննա Ե. Հախումեանց . . 10
Օհանջան Հախումեանց . . 10
Պօղոս Սարգիսեանց . . . 40
Բաղդասար Սարգիսեանց . . 15
Գրիգոր Աղամալեանց . . . 15
Յովհաննէս Մ. Տէր Յակոբեանց . 12
Յովհաննէս Ճգնաւորեանց . . 5
Յարութիւն Մատաթեանց . . 6
Սարգիս Զարգարեանց . . 4
Միրզայ Աթամալեանց . . 3
Երամիշ Երամիշեանց . . 4
Հայրապետ Տէր Յակոբեանց. . 12
Մ. Քօչարով . . . 2
Համբարձում Ժամ՝յարով . . 3
Աթանէս Ա. Թաւրիզեանց . . 1
Անյայտ ոմն 2 50
Անյայտ ոմն . . . 2
Ղուկաս Խ. 2
Աւետիս Բաբայեանց . . . 12
Հաշտարար դատաւոր, Ղզլար քաղաքացի Խաչատուր Ե. Քանանեանց . 15

Շամախեցի վերջին է բոլոր:

Թադէոս Ա. քահանայ Բուդաղեանց 12
Գէորգ բէգ Լալայեանց. . . 25
Արտեմ Պ. Ներսէսեանց . . 20
Սերգէյ Տէր Մ. Վարշամեանց. . 12
Պ. Խաչատուր Կիրիեանց . . 12
Տիկին Զաւահիր Խ. Կիրիեանց . 6
Գրիգոր Վասիլեանց . . . 12
Տիկին Շուշան Գ. Վաքիլեանց . 10
Սամուէլ Բաղիրեանց. . . 12
Տիկին Նազանի Հ. Բաղիրեանց . 12

Թոմաս Ամիրեանց . . . 12
Յակոբ բէգ Մարդուլեանց . . 1
Զախար Թադոսեանց. . . 12
Յակոբ Փիրզատեանց . . . 5
Կարապետ Սաղաթելով . . 12
Յակոբ Բաբախանեանց . . 3
Գրիգոր Խաչատրեան . . . 13
Յարութիւն Բինեաթով . . 5
Յովհաննէս Մայիլեանց . . 6
Ղէյվանդով 3
Ալէքսանդր Լազրով . . . 3
Յարութիւն Եղիազարեանց . . 2
Մարտիրոս Սահակեանց . . 2
Կարապետ Թումայեանց . . 1
Կարապետ Օսեփով . . . 2
Սարգիս Եաւրումով . . . 2
* * Յարութիւնով . . 2
Սողոմոն Շահվերդով. . . 1
Կարապետ Ֆրանկիլով . . 1
Մահտեսի Յ. Սանամով . . 1
Սամուէլ Զիլինկարով . . 1
Երեմիայ Պոպով . . . 2
Զաւատ Պաղդասարով . . 1
Գասպար Սանգուլով . . . 2
Բալասի Գրիգորով . . . 2
Գրիգոր Նազարով . . . 2
Սեյրան կամ իր ընկերն . . 1
Զուանշեր Զիլինկարով . . 1
Յարութիւն Թաւաքարով . . 5

Թիֆլիսեցի վերջին է բոլոր:

Աւետ Մ. Մամիկոնեանց . . 20
Պաւէլ Շ. Մելիք-Բէգլարեանց . 10
Յովսէփ Մելիք-Բէգլարեանց . 3
Գրիգոր Մելիք-Բէգլարեանց . 3
Արտեմ Գ. Եաղուբեանց . . 15
Ամբակում Վերմիշեանց . . 12
Կոստանդին Ի. Գրիգորեանց . . 12
Նիկողայոս Վարձիգուլեանց . . 25
Մելքում Ս. Սարգիսեանց . . 12
Նատալիա Նազարբէգեանց . . 12
Ստեփան Լիանոզով . . . 10
Կոստանդին ,, . . . 10

Գրիգոր Լազարեանց . . .	3
Միկիտ Ծատուրեանց . .	3
Կոմրամազէ * * . . .	1
Եկոր Մ. Ցակոբեանց. . .	3

Բ-ֆ-ոյ։

Սերգէյ Մ. Կրասիլնիկեանց . .	20
Վարդան Ի. Վարդանեանց . .	15
Ցակովբ Ադամեանց . . .	12
Ցակովբ Մեհրաբեանց . .	3
Բաբայ Մայիլեանց . . .	12
Պօղոս Կիլանցով . . .	5
Գրիգոր Այվազեանց . . .	10
Սերգէյ Շանաբանդով . .	2
Անթառամ Վարդանեանց . .	1
Հարոն Գոմիշ . . .	1
Լուիվիկ Սերգէյեանց . .	2
Մարտիրոս Խտիրով . . .	6
Գրիգոր Սանամով . . .	2

Ն-Ի-Ն-Ի-Ն ֆ-ոոոէ-ի վերքենէ ի Բ-ֆ-ոոոյ։

Գրիգոր Դիլզարեանց . . .	12
Ոսկան Դիլզարեանց . . .	6
Վ.ից կուբերնատորի կինը . .	3
Կապիտան Վիտտինսկիյ . .	1
Անյայտ ոմն	1
Անյայտ ոմն	3
Սողոմոն Ստեփանեան Գանձակեցի .	3
Աբրահամ մահտ. Ամայով . .	1
Իվան մատ. Օհանեան . .	1
Արզար Աւշարով . . .	1
Մատաթ Տէր Մարտիրոսեան .	3
Խաչատուր Տէր Զաքարեանց Թաւրիզեցի	5
Միկիթ Նաբաթով . . .	3
Մարգար Նազարբէգեանց . .	2
Սարգիս Աբրահամեանց . .	1
Սրապիոն Գրիգորեանց . .	1
3, 15, 16, 17, մատենի օրագրով Հաշտարար դատաւոր Քանանեանցից ստացված է յօգուտ աղքատաց ընդ ամենը	26 50
4, 5, 10, 13, և 14, մատենի օրագրով պատրաստ դրամց գումարից ստացված է տոկոս մինչև 1874 թ. Օգոստոսի 25, ընդ ամենը .	98 35
1873 թուականի Ապրիլի 1-ից *) մնաց գանձապետի մատ առձեռն պատրաստի գումար դրամց . .	568 57
Ընդ ամեն գումարնէ	1527 92

(Ծ Ա Խ Ք)

Սկսեալ ի 1-ն Ապրիլի 1873 թ. մինչեւ 1 Օգոստոսի 1874 ամի։

Բագուցի աղքատաց բաժնված են 15 ամիսուան ընթացքում . .	135
Շամախեցի Բագուաբնակ աղքատաց	217
Պարսկաստանցի Բագու պատահած աղքատաց . . .	93
Ղարաբաղցի Բագու պատահած աղքատաց	105 15
Պօլսեցի, Հաշտարխանցի, Գանձակեցի, Նուխեցի, Ագուլիսցի և Լանքարանցի Բագու պատահած աղքատաց	94 50
15 ամիսվայ ընթացքում պատահած 6 աղքատ ննջեցելոց թաղման ծախս եղած է. . . .	36 19
Եւս յիշեալ թուում 3 աղքատ հիւանդների բժշկութեան վարձ արքունի հիւանդանոցին . .	32 50½
Թղթի, և այլ մանր կարեւոր ծախս	8 95
Մատենի № 34 օրագրով տոկոսով տուած առաջիկայ Օգոստոսի 25-ն Նիժնիայի տօնավաճառում ստանալիք	800

(*) 1873 թուականի հաշուի մէջ մնացած 46 ռուբլի արտաքին պարտականի չքաւորութեան պատճառաւ Հոգաբարձուաց խորհրդակցութեամբ ընծայվեցաւ պարտապանին։

Գանձապետի մօտ կայ պատրաստի գումար դրամոց . . . 5 62|2

Ընդ ամեն գումարն է 1527 92

Նախագահ Թադէոս Աւ. քհնյ. Բուդաղեանց
Հոգաբարձուք Յակովբ Ադամեանց
Մուսայէլ Շահկեսարեանց
Բաղդասար Սարգիսեանց
Խաչատուր Կիրիեանց
Գանձապետ Գրիգոր Դիլդարեանց

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲՈՒՋԱՆԴԵԱՆ.

ՎԱՆՔԻ ՅՈՒՆԱԴԱՒԱՆ ՀԱՅՔ

Ակնայ Վանք գիւղի Հայայոյն վարժարանին հարցաքննութեան վրայ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ ի հրատարակութիւն, զոր կը հրատարակենք ի գիտութիւն ազգայնոց և ի քաջալերութիւն աշակերտաց, շնորհակալ ըլլալով Մեծ. Եանքօ էֆ. Եանքօեանէն՝ որ ազգասիրաբար փութալով յիշեալ վարժարանի հոգաբարձութիւնն ու խնամակալութիւնն ընդունելու, մեծ յոյս կուտայ քիչ ժամանակէն յիշեալ Հայայոյն հասարակութեան՝ բուն իսկ իւր ազգայնութիւնը համարուող հանգամանաց տիրանալու։

Ահաւասիկ նամակին օրինակը։

«Նախընթաց կիւրակէ Յուլիս 28 գիւղիս Ս. Գէորգ եկեղեցւոյ վարժարանիս աշակերտաց Յունարէն և Հայերէնի տարեկան հարցաքննութեան հանդէսը կատարեցաւ ընդ նախագահութեամբ Գեր. Իակոբոս սրբազանի և մաքրակրօն Գիլոթէոս հօր և ի ներկայութեան գիւղիս Մեծ. Տեարց և ժողովրդոց. քննիչ կանչուած էին Մուրատեան Խոսրով, Դերձակեան Աղարիա և Գրիգորեան Յակոբ էֆ Ները դպրոցին Հոգաբարձու Մեծ. Եօրտան էֆ ի հրաւիրանաց, որք գալով քննեցին Յունարէն և Հայերէն դասերը. աշակերտք ինչ աստիճան յաջողակ ըլլալնին պատմելը մեզ չը-պատկանելուն՝ կը թողում հոգաբարձութեան և ներկայելոց. քննութիւնը սկսաւ առաւօտեան ժամ 1 ին և տևեց ժամ 6. Աղարիա էֆ Դերձակեանը իւր շնորհակալութիւնը և զգացումը յայտնելով, հակիրճ ատենախօսութիւն մ'ըրաւ աշակերտաց ուղղեալ. անկէց քննիչք մեկնեցան գնալու Հոգաբարձու Եօրտան էֆէնտիին տունը, ուր ի պատիւ քննչաց լաւ կերպով հացկերոյթ մը պատրաստած էր յիշեալ էֆէնտին։

Հոգաբարձու Եօրտան էֆ ին կրած ազգասիրական եռանդն ալ արդարև անուրանալի է. կաշխատի բաւական գիւղիս մանկտեաց յառաջդիմութեան և ըստ կանոնի դասատուաց պաշտօնը վարել տալու, որք թէպէտ ինքնին կզգան իրենց պարտաւորութիւնը. ուստի ներեցէք ինձ որ ձեր ներկայութեան ալ մատուցանեմ յիշեալ էֆէնտիի իմ խորին շնորհակալիքս։

Մնամ Ձեր.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ
Դասատու Վանուց Վարժարանիս
Օրագիր Թ. 1323.

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԿԷՕՉԵԱՆ.

Շաբաթ առաւօտ (Հոկտ 11). կանուխ ըստ սովորութեան Թերթերնիս մամուլը դրուած միջոցին՝ ի հանալով մեծ. Կարապետ էֆ. Գարակէօզեանի մահը, համառօտիւ մը ծանուցինք զայն մեր ընթերցողաց։

Կարապետ էֆէնտիի այս տարաժամ մահը մեծ ցաւ պատճառեց ամեն կարգի ազգայնոց։

Սա տակաւին երիտասարդ 35 տարեկան հասակին մէջ ունէր ժամանակին պահանջած ամեն բարեմասնութիւն, հարստութիւն, տաղանդ, հմտութիւն, բարեբարոյ վարք. այս ամենը կային հանդուցելոյն վրայ, որով ապագային մէջ մեծ յոյսեր կը տածէր ազգը իւր վերայ. սակայն անագորոյն մահն ամեն յոյս ի դերեւ հանեց։

Սա իւր բազմազբաղ վիճակին մէջ ազգային բաւական պաշտօններ վարեց, երեսփոխան, Ընդհ. ժողովոյ ատենապետ, Քաղաքական ժողովոյ, Վերաքննիչ յանձնաժողովոյ եւ հարստահարութեանց ցանձնախմբի անդամ էր, իւր ամեն պաշտօններուն մէջ միշտ խղճի մտօք ծառայած եւ իւր ընկերաց համարումը գրաւած էր։ Բաց ասոնցմէ, Սամաթիոյ, Նաւլը-գաբուի աղքատիկ վարժարանին բարերարաց մին էր եւ անոնց նիւթական վիճակին օգնելէն զատ, բարոյապէս ալ կօգնէր իւր վրայ պահելով տնօրէնութեան պաշտօնը։